

ՀՏԴ՝ 930.272

ՀՆԱԳՈՒՅՆ ՏԱՐՈՆԻ ՔՐՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մարգիս Պետրոսյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ *աստված, քուրմ, զինվոր, անվանադիր, դաշտ, լեռ, տեղանուն, երկրանուն, Հասուվա, Տարոն, Տուրուբերան:*

Հոդվածում քննարկվել են պատմական Տարոն գավառի քրմության վերաբերյալ եղած հնագույն վկայությունները՝ պահպանված թե՛ ինքնակա սեպագիր աղբյուրներում և թե՛ հայկական ավանդազրույցներում: Վերջիններից կարևորը Տարոնի անվանադիր համարված Տարբանի մասին ավանդազրույցն է: Համադրելով այդ տեղեկությունները հայերեն *Տորբան* բառի արմատներին՝ հեղինակը հանգել է այն եզրակացության, որ իրականում Տարբանի նախատիպը եղել է հնագույն Տարոնի քուրմ-արքաների հավաքական կերպարը, իսկ նրա *Տարբան* անունը տարբերակն է հայերեն *տորբան* «վարդապետ» բառի: Հնագույն Տարոնի մանդա և սալա ցեղերի կառավարիչների մեջ եղել են ոչ միայն զինվորական դասի, այլև քրմական դասի ներկայացուցիչներ: Այս վերջինները պետք է պատկերված լինեն ծամավոր զինվորների տեսքով:

Նախաբան. Հնադարյան որևէ երկրի և նրա բնիկ ժողովրդի պատմական հեռավոր անցյալի ուրվագծման փորձը հավաստի համարվել չի կարող այնքան ժամանակ, քանի դեռ նրան վերաբերող գրավոր աղբյուրներին (եթե այդպիսիք կան) և հնագիտական նյութերին չեն միացել տեղական հին ավանդազրույցների ու բանահյուսության այլ ժանրերի տրամադրած և գիտական վստահելի վերլու-

ծուխային ենթարկված նյութերը: Այս դեպքում կարևորվում են նաև գրավոր աղբյուրների (եթե այդպիսիք կան) և ավանդազրույցների մեջ առկա հատուկ անունների գիտական ստուգաբանությունները: Ընդ որում, առավել կարևոր են տեղանունները՝ մանավանդ հազարամյակներ տեսած աշխարհագրական անվանումները: Տեղանունների գիտական հավաստի ստուգաբանությունների հիման վրա կարելի է կարևոր հետևություններ անել ոչ միայն հազարամյակներ առաջ այն ստեղծած տեղաբնիկների լեզվի և էթնիկական պատկանելության, այլև նրանց վարած տնտեսաձևի, հասարակական կառույցների, կենցաղի և դրանց հիմքի վրա բարձրացած պաշտամունքի և կրոնի ինչ-ինչ տարրերի վերաբերյալ:

1. Հնագույն Տարոնի մասին ավանդազրույցը.

Հասուվա երկրի տեղորոշումը

Մովսես Խորենացու համար աղբյուր ծառայած Ուրմալիոդորոս հույն փիլիսոփային հայտնի ավանդազրույցի համաձայն՝ Նոյ նահապետի Մեմ որդին Հայկական Տավրոսում երկու ամիս բնակվելուց հետո «անուանե յանուն յիւր զլեառնն Սիւ եւ դառնայ անդրէն յարեւելս հարաւոյ՝ ուստի եկն: Իսկ ի կրտսերագունից որդուցն նորա Տարբան անուն, երեսուն ուստերօք եւ հնգետասան դստերօք եւ նոցին արամբք մեկնեալ ի հորէն՝ բնակե անդէն ի նոյն գետեզեր, յորոյ անուն եւ զգաւառն անուանե Տարօն»¹: Կասկած չկա, որ սա հին հայկական ավանդազրույց է՝ ձևափոխված Նոյ նահապետի Մեմ որդու և Տարոն-Սասունի Սիւ լեռան անունների նմանաձայնության պատճառով (դրա վերաբերյալ ստորև): *Տարբան* անունը բնիկ հայկական է՝ տարբերակը *տորբան* «վարդապետ- (ույնուհետև)» բառի²: Հմմտ. *-n/-w* համարժեքությունը *-n-*ից առաջ արտացոլող *աշորայ/աշարայ, խորովել/խարել, մորեխ/մարախ, տորմիղ/տարմ, Կորդուք/Καρδουχ (-οι)* արմատակից գույզերը, ըստ այսմ, *Տարբան//տորբան*:

Հնագույն Տարոնը *Հասուվա* (խեթ. *Ḫašawa*) անվամբ հիշատակված է նախ խեթ թագավոր Խաթուսիլի I-ի (մ.թ.ա. 1650-1620 թթ.), ապա նաև սրա հաջորդների կողմից³: Խեթ թագավորը Եփրատի գետանցով մտել էր Իսուվա (հետագա Ծոփքը), ապա ներխուժել Հասուվա, որն ավելի ընդարձակ է եղել, քան հետագա Տարոնը: Խաթուսիլի I-ի Տարեգրության ռուսերեն թարգմանիչ Վ. Վ. Իվանովի

¹ Մովսեսի Խորենացու Պատմություն Հայոց (այսուհետև՝ **Խորենացի**), Եր., 1981, գիրք Ա, գլ. գ:
² **Պետրոսյան Ս. Գ.**, Սեպագրային Durubani/հայերեն *տորբան*,//Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի գիտական նստաշրջանի նյութեր, Վանաձոր, 2009, էջ 65-70:
³ «Keilschrifttexte aus Boghazköi», Staatliche Muzeum zu Berlin, Vorderasiatische Abt, Berlin, 1961, X, 1-2 (Ռուսերեն թարգմանությունը **Վ. Վ. Իվանովի**, տե՛ս *Летопись Хаттусилиса I, «Хрестоматия по истории Древнего Востока», часть I, М., 1980, стр. 263-265*), **Պետրոսյան Ս. Գ.**, Մուրսիլի I-ի արևելյան արշավանքի երթուղին, //ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. IV, Գյումրի, 2001, էջ 53-61:

կարծիքով, Հասուվայի անունը՝ Կաճճա, նույնական լինելով լուվիերեն Կաճճա «արքայական» բառի հետ, նշել է խեթական մի փոքր քաղաք Փոքր Ասիայի հարավ-արևելքում⁴: Ջ. Գարստանգն ու Օ. Գերնին այն տեղորոշում են հյուսիսային Ասորիքում և նույնացնում տեղի Խասում (Կաճճա, Կաճճում) բնակավայրի հետ⁵: Այդ նույն կարծիքին է նաև Գ. Գիորգաձեն⁶: Հասուվան Հայկական լեռնաշխարհում՝ Եփրատից արևելք է տեղորոշվում է. Վայդների, Վ. Խաչատրյանի և տողերիս հեղինակի աշխատություններում⁷: Այդուհանդերձ, այն Իսուվային չնույնանալով, մեր կարծիքով, նույնը լինել չի կարող նաև հետագա Մեծ Հայքի Մոկք նահանգի Արքայից գավառի հետ, թեպետև այդ երկու տեղանունները կարծես թե նույնիմաստ են: Բանն այն է, որ մեր Հասուվայի անվան «արքայական» ընկալումը գալիս է նրա խեթալուվիական գրության ձևից (հմմտ. Կաճճա, Կաճճում. վերջինը արքադ. ուղղ. հոլ. -um վերջավորությամբ): Խեթական դպիրները, ծանոթ լինելով խեթական մի առասպելից հայտնի Կաճճա//«Արքայական» քաղաքի անվանը (ըստ առասպելի՝ այստեղից մի արծիվ էր հղվել Պիրվա աստծու մոտ⁸), դրա ազդեցությամբ են ստեղծել հայկական Հասու- (վա) տեղանվան Կաճճա ձևը: Վ. Խաչատրյանը հստակ ցույց է տվել, որ Հասուվա երկիրը գտնվել է ներկայիս Շերեֆեդդին լեռներից արևելք, որովհետև խեթ թագավորներից մեկը նրան հասնելու համար հարկ է համարել նախօրոք անցնել Իսուվան (հետագա Ծոփքը), Ուրուրուվան (Որոր/Օրորի շրջանը) և Պալունան (Պալունիքը)⁹: Իսկ Պալունիքը՝ բուն Տարոնի հյուսիսարևմտյան հարևանը եղել էր նրա երբեմնի մասը¹⁰: Հասուվայի և հետագա Տարոնի նույնական լինելը հաստատվում է նաև Խաթուսիլի I-ի այն հաղորդմամբ, ըստ որի՝ Հասուվայից նա ներխուժել էր «Արևի աստվածության երկրներ»¹¹, այսինքն՝ Վանա լճի ավազան, որի Խախա երկրից հափշտակված ավարի մեջ խեթ թագավորը հիշատակում է նաև «մեկ նավ, որի քիթը ոսկեպատ» էր¹²: Այս նավի առկայությունը Խախալում ցույց է տալիս, որ նա գտնվել է ինչպես Հասուվայի, այնպես էլ Վանա լճի հարևանությամբ: Իսկ այդպիսին էր հետագա Բգնունիքի դիրքը՝ Տարոնից արևելք,

⁴ **Иванов В. В.**, նշվ. աշխ., էջ 323:

⁵ **Gasstrang J., Gurney O. R.** The Geography of the Hittite Empire, London, 1959, p. 52-56.

⁶ **Гюргадзе Г. Г.** Ранняя Малая Азия и Хеттское царство, «История древнего Мира, I, Ранняя древность», М., 1989, стр. 222.

⁷ **Weidner E.** Politische Dokumente aus Kleinasien, Leipzig, 1923, S. 45; **Хачатрян В.** Восточные провинции Хеттской империи (Вопросы топонимики), Ер., 1971, стр. 124-125: **Պետրոսյան Ս. Գ.**, Մուրսիլի I-ի ..., էջ 57-58:

⁸ **Гамкрелидзе Т. В., Иванов В. В.**, Индоевропейский язык и индоевропейцы, т. I-II, Тб., 1984, т. II, стр. 538.

⁹ **Хачатрян В.**, նշվ. աշխ., էջ 124:

¹⁰ **Адонц Н.** Армения в эпоху Юстиниана, Ер., 1971, стр. 311.

¹¹ **Иванов В. В.**, նշվ. աշխ., էջ 265:

¹² Նույնը:

նրա և Վանա լճի միջև: Խաթուսիլին այս երկիրը *Խախա* է կոչում իր արքայանիստ քաղաքի անունով, ինչպես վարվում է նաև Հասուվայի, Խալպայի և այլ դեպքերում:

2. *Հնագույն և հին Տարոնի տեղանունների ստուգաբանություններից*

«Աշխարհացոյց»-ից գիտենք, որ Մեծ Հայքի Տարոն (Տարաւն/Տարօն) գավառը մասն էր կազմում Տուրուբերան նահանգի (աշխարհ) և եղել է նրա կենտրոնական գավառը, որի անունով ամբողջ նահանգը կոչվել է նաև *Տարաւն* կամ *Կողմն Տարաւնոյ*¹³: *Տարօն/Տարաւն* տեղանվան ստուգաբանության հարցում մեզ համար հենակետ է ծառայում այն հանգամանքը, որ տարբեր դարաշրջաններում նա ուղղակի *Դաշտ*¹⁴ է կոչվել՝ որպես «ներքև» նշող անդամը՝ «վերև» նշող Հայկական Տավրոսի կենտրոնական մասի (Սասնա լեռներ) *Լեռ* անվան հետ միասին կազմած հակադրամիասնության: Սրանց բնակիչներն էլ համապատասխանաբար կոչվել են *դաշտեցի* և *լեռնցի/սարեցի*:

Տար-աւն բաղադրիչներից բաղկացած երկրանվան մեջ *-աւն* բաղադրիչը վերջածանց է՝ առկա նաև *գեղաւն*, *գործաւն*, *կրաւն*, *ցրաւն*(ք) բառերում¹⁵: *Տարաւն>Տարօն* երկրանվան առաջին բաղադրիչ *տար-* արմատն առկա է նաև *տարած* (<տար-ած) «սփռվող, ծավալական», «փռվելը, տարածվելը» բառում (սրանից են *տարածական*, *տարածություն* և այլն): Այս բառը համարվում է ասուրերենից կատարված փոխառություն, բայց սեմական այլ լեզուներում նրան զուգահեռ ձևեր չկան¹⁶: Ըստ երևույթին, մեր *տար-* արմատը հ.-ե. ծագում ունի և ստեղծվել է նախաձայն *s-ի անկումով այն նույն արմատից, որից են ազգակից լեզուների հետևյալ բառերը. հուն. στέρνον «լանջ, հարթություն», հին հնդկ. staras «շերտ», prastarás (<pra-staras) «անկողին», «հարթություն, հարթավայր», ռուս. простор (<про-стор) «ազատ տարածություն, լայնարձակություն», միջ. իռլ. srath (<sthar) «ափ, հովիտ» և այլն¹⁷: Սրանց նման նախաձայն հ.-ե. *s-ի պահպանումով ունենք *ստոր* բառը (արմատի միջին ձայնադարձից) > *ստորին*, *ստորոտն* և այլն: Մինչև նույն արմատից ծագած բառերում *-ր-*ից առաջ *ա/ռ* համարժեքության մասին խոսք եղավ վերևում:

Սասնա լեռների *Սիւ/հին* անունը Նոյի Մեմ որդու անվան հետ ոչ մի կապ չունի: Այդ անձնանվան եբրայական Šēm ձևը հունարենում է դարձել Σήμ>*Սէւ*¹⁸:

¹³ Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջեր 85, 106, 107:
¹⁴ Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. II, Եր., 1988, էջ 30:
¹⁵ Զահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀԼՊԼԺ), Եր., 1987, էջ 355:
¹⁶ Աճառյան Հ. Հ., Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. IV, Եր., 1979, էջ 383:
¹⁷ Фасмер М. Этимологический словарь русского языка, т. III, М., 1971, стр. 379, 380-381, 768.
¹⁸ Աճառյան Հ. Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. IV, Եր., 1948, էջ 489:

Լեռնանվան հիմքում հայ. *սիւ* բառն է. «*Սիւ*-կոթող, կամ դուխօղ, կամ լեառն»¹⁹, որը ծագում է հ.-ե. *kem- «ծածկել, պատել» արմատից²⁰: Մառցապատմանը հաջորդած հալոցքի տաք ու խոնավ կլիմայի պայմաններում Հայոց երկնասլաց լեռները ծածկվում էին խիտ ամպերով և մառախլապատ էին: Դրանով է պայմանավորված, որ հ.-ե. *kem- արմատից ծագած հնդեվրոպական ազգակից լեզուների շատ բառեր առնչվում են թե՛ «լեռ», «երկինք» և թե՛ «ամպ, մառախուղ» հասկացություններին²¹: Սասնա լեռները հետագայում ևս ամպահավաք և մառախլապատ էին: Ահա թե այդ փաստը ինչով է պայմանավորել ավանդազրույցը: Երբ Աստղիկ դիցուհին լողանալիս է լինում Արածանի գետում, իր մերկությունը դիտողներից ծածկելու համար «հնարած է Աստղիկը, որ մշուշ պատե այն ամբողջ միջավայրը, այսինքն՝ Մշո դաշտը ծագած ի ծագս, թե՛ ամառն, թե՛ ձմեռն, մինչև ի ծունկս սարերուն, որով անհնարին կլինի որնիցե կողմի լեռներեն տեսնվիլ, և գուցե այս շարունակ և թանձր մշուշեն այդ երկիրը կոչված լինի նաև Մուշ»²²: Մեր *Սիւ* բառի «կոթող» և «լեառն» նշանակությունների արմատակիցներն են հին բարձր գերմ. himil «երկինք, առաստաղ», գերմ. Himmel «երկինք», հոլանդ. hemel «երկինք, տանիք» բառերը²³:

Ինչպես վերևում տեսանք, ավանդազրույցի հայտնի օրինակում Տարբանը, լինելով Տարոնի անվանադիրը, նաև համարվում էր Մեմի որդին: Այստեղ, *Սիւ* անձնանվան և *Սիւ* լեռնանվան նմանահնչյունից բացի, իր դերը կարող էր ունենալ Մեմի և Տարբանի քրմեր լինելու հանգամանքը: Հրեական հայտնի հին ավանդազրույցների համաձայն, այդպիսի գործառույթներ կրողը՝ առաջին հոգևորականն ու մարգարեն եղել է Նոյի որդիներից Մեմը, որը և եղել է Ջրհեղեղից հետո Աստծուն առաջին գոհաբանական զոհ մատուցողը: Ռափայել հրեշտակապետը հենց նրան էր հանձնել աշխարհի բոլոր բժիշկների համար գիտելիքների շտեմարան ծառայած «Բուժումների գիրքը»²⁴: Տարբանից բացի՝ հնագույն Տարոնի քրմական գործառույթներ կրած վիպական անձնավորություն է համարվել նաև Մեղտեսը: Ինչպես նա, այնպես էլ նրա կողմից հիմնադրած համարվող Մեղտի բնակավայրը կրում են քրմին վայել անուններ: *Մեղտես* և *Մեղտի* անունների

¹⁹ «Բառգիրք Հայոց», Քննական բնագիրը և առաջաբանը **Հ. Ամալյանի** (այսուհետև՝ «Բառգիրք հայոց»), Եր., 1975, էջ 288 և 429-ի ծան. 203:

²⁰ **Джаукян Г.**, Взаимоотношение индоевропейских, хуррито-урартских и кавказских языков, Ер., 1967, стр. 77, 143, ՀԼՊՆԺ, էջ 131, 174:

²¹ **Гамкрелидзе Т. В., Иванов В. В.**, նշվ. աշխ., հ. II, էջ 667-670.

²² **Մրվանձալյանց Գ.**, Երկեր, հ. I, Եր., 1978, էջ 71-72:

²³ **Джаукян Г.**, նշվ. աշխ., էջ 77, 143:

²⁴ **Щедровицкий Д. В.** Сим, Хам, Иафет, «Мифы народов мира», т. II, стр. 436.

հիմքում հ.-ե. *meldh-«գոհաբերելիս աղոթել, աստվածներին աղոթել»²⁵ նախա-
 ձևն է, որի արմատակիցն է հայ. *մաղթ* «աղոթք, մաղթանք» բառը²⁶:

Հնագույն Տարոնի քրմերի հոգևոր ոլորտի գործունեության հետ ուղղակի
 կապի մեջ է նաև Հասուվա (Hašawa) երկրի և նրա կենտրոնի անունը: *Հասուվա*
 անվան *-ուվա* վերջավորությունը լինելու է խեթ դպիրների կատարած հավե-
 լումը՝ որպես խեթալուվիական լեզուներին բնորոշ տեղանվանակերտ վերջա-
 ծանց: Հմմտ. նրանց իսկ հիշատակած Հայկական լեռնաշխարհի բնակավայրի
 անունների Iksuna և Iksunuwa գույգ ձևերը, Oror (Ռոր) ձևի դիմաց Ururuwa ձևը,
 Փոքր Ասիայի արևմուտքի ʾΑσία երկրանվան դիմաց խեթական Ašawa ձևը և
 այլն: *Hašawa//Հասուվա* տեղանվան հիմքում հայերեն «*Հասու* - իմաստուն, կամ
 գիտուն»²⁷ բառն է: Հ.-ե. *h₂k- > *hau-* արմատից ունենք նաև *հասկանալ*, «հասու
 լինել, իմանալ, ըմբռնել», *հասանել* «հասկանալ, իմանալ, վերահասու լինել»,
հասանողություն «մտքի ըմբռնում» բառերը և այլն²⁸:

3. Հնագույն Տարոնի քուրմ-զինվորներն ու նրանց սերունդները

Հայ քրմերը, մտավոր գործունեության ոլորտի տնօրինողները լինելուց
 բացի, օժտված են եղել ռազմական որոշակի գործառնություններով: Քրմապետերը
 նաև քրմերի գնդերի հրամանատարներն էին: Հովհան Մամիկոնյանի օգտագոր-
 ծած մի փաստաթղթում (ըստ երևույթին, Զենոբ Գլակի արխիվից էր) բերված են
 Տարոնի մի քանի քրմապատկան գյուղերի հանած զինվորականության տեսակ-
 ներն ու թվաքանակը: Ըստ դրա, Կուառը հանել է 1030 հեծյալ և 2000 հետևակ,
 Մեղտին՝ 800 հեծյալ և 1030 հետևակ, Տուսը՝ 400 հեծյալ, Խորնին՝ 700 հեծյալ և
 1007 հետևակ, Բրեխը՝ 2040 հեծյալ, 840 աղեղնավոր, 1080 տիգավոր և 280 պար-
 սավոր²⁹: Փաստաթղթի վերջում կարդում ենք. «Արդ այս աւանագեղքս ի բնե
 տուեալ էին կոռցն ի ծառայութիւն»³⁰: Մեր կարծիքով, Հայոց բանակում զինվոր-
 քրմերի գոյությամբ է պայմանավորված եղել հին-վաղքրիստոնեական Հայաս-
 տանում կարճազատների գոյությունը:

Ըստ Փավստոս Բուզանդի՝ Տարոնի Հացեկաց գյուղը՝ Մեսրոպ Մաշտոցի
 ծննդավայրը, կարճազատներին պատկանած գյուղ էր³¹: *Կարճազատ* բառին

²⁵ Պետրոսյան Ս. Գ., Պետրոսյան Լ. Ս., Եռյակ բնակավայրի համակարգը հին Հայաստանում և
 Ռուսիայում, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. II, Եր., 1999, էջ 137-138:

²⁶ Պետրոսյան Ս. Գ., Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, Եր., 2006, էջ
 218-221:

²⁷ «Բառգիրք Հայոց»,... էջ 181:

²⁸ Աճառյան Հ. Հ., ՀԱԲ, հ. III, Եր., 1977, էջ 46-47:

²⁹ Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Աշխատութեամբ և առաջաբանով Աշ. Աբրահամ-
 յանի, Եր., 1941, էջ 111-112:

³⁰ Նույն տեղում, էջ 112:

³¹ Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, բնագիրը Ք.Պատկանյանի (այսուհետև՝ **Բու-
 զանդ**), Եր., 1987, գիրք Գ, գլ. Ժթ:

տրված ընդունելի բացատրությունները՝ «ստորին աստիճանի ազատ-ազնվական»³², «փոքր ազատ, երկրորդական կամ աննշան ազնվական»³³, այդուհանդերձ, անորոշ են թողնում ազնվականական այս խավի ծագման հարցը: *Կարճագատ* անվանումն արդեն իր *-ագատ* բաղադրիչով ցույց է տալիս հասարակական այդ խավի ազատների դասից սերելու իրողությունը: Իսկ դրանք երկուսն էին՝ զինվորականներ և հոգևորականներ, որոնք արտոնյալ և ապահարկ էին՝ ի տարբերություն հարկատու անազատների: Անհավատալի է, որ կարճագատները ի սկզբանե պատկանեին զինվորական դասին, հետո ինչ-որ ժամանակ, ինչ-ինչ պատճառով զրկվեին իրենց ունեցած արտոնությունների մի մասից և այդ իսկ պատճառով կոչվեին *կարճագատներ*: Բայց հավատալի է, եթե նրանք ի սկզբանե պատկանել են քրմության այն խավին, որը հոգևոր ոլորտի գործառույթների հետ ունեցել է նաև զինվորական պարտականություններ: 301թ. հետո այդ խավը զրկվել էր հոգևոր ոլորտի գործառույթներ իրականացնելու իրավունքից, բայց պահպանել էր զինվորական պարտականությունները՝ դրանց համապատասխան հողատիրական իրավունքով:

Մ.թ.ա. XIV դ. վերջին կամ XIII սկզբին (ճշգրիտ թվականը վերջնականապես որոշված չէ) Քաղեշ քաղաքի մոտ՝ հյուսիսային Ասորիքի Օրոնտես գետից ոչ հեռու, կատաղի ճակատամարտ է տեղի ունեցել Ռամսես II-ի եգիպտական բանակի և խեթ թագավոր Մուվատալիի գլխավորած բանակի միջև: Ճակատամարտի որոշ մանրամասներ հայտնի են եգիպտական արձանագրություններից, իսկ առանձին դրվագներ՝ բարձրաքանդակներից³⁴: Բարձրաքանդակները ցույց են տալիս, որ խեթական բանակը էթնիկական տեսակետից միատարր չի եղել, ինչը հաստատվում է արձանագրությունների հաղորդումների միջոցով³⁵:

Ուշագրավ են մանավանդ խեթական բանակի գերված այն զինվորները, որոնք եգիպտական բարձրաքանդակներում պատկերված են երկարափեշ հագուստներով, և որոնց մեջ կան նաև երկար ծամավորներ³⁶: Կարծում ենք, թե սրանք լինելու էին Հայկական լեռնաշխարհից՝ մասնավորապես Տարոնից (լայն առումով), որովհետև պատկերված են արմենոիդ մարդաբանական տիպին բնորոշ դիմագծերով: Երկարափեշ զինվորների հնարավոր հայկական ծագման առթիվ հիշենք նաև Ստրաբոնի կողմից համեմատության մեջ դրված հայերի և

³² Նույն տեղում, էջ 426-427:

³³ Աճառյան Հ. Հ., Հայոց գրերը, Եր., 1984, էջ 70:

³⁴ Ceram C. W., նշվ. աշխ., էջ 169-192, նկ. 30-35:

³⁵ Герни О. Р. Хетты, М., 1987, стр. 34, 98, Պետրոսյան Ս. Գ., Հայկական լեռնաշխարհի հնագույն կառամարտիկների մասին, // «ՎԷՄ» համահայկական հանդես, 2014, թիվ 4, էջ 29-30:

³⁶ Герни О. Р., նշվ. աշխ., էջ 128-129 ներդիրի նկ. 5 և 6: Նաև՝ Պետրոսյան Ս. Գ., Ջարմայր նահապետի և «Քաղղեացոց» արքայացանկի շուրջ, // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. XVII, Գյումրի, 2014, էջ 68, նկ. 1 և 2:

հունական Թեսալիայի բնակիչների հագուստները՝ նույնպես երկարափեշ: Ըստ նրա՝ նմանության պատճառը լինելու է ինչպես հայերի և թեսալացիների ազգակցությունը, այնպես էլ բնակլիմայական նման միջավայրերը³⁷:

Թեպետև խեթագետները եգիպտացիների պատկերած երկարափեշ զինվորներին «խեթեր» են համարում, բայց որ դրանք խեթեր չեն եղել, բխում է նաև Օ. Գերնիի հետևյալ տողերից. «Ինչ վերաբերում է խեթական հետևակի հանդերձանքին ու զինվածությանը, ապա տարօրինակ անհամապատասխանություն կա (դրանք պատկերող - Ս. Պ.) եգիպտական բարձրաքանդակների և բուն խեթական հուշարձանների միջև: Առաջիններում խեթերը պատկերված են կարճ թևքերով երկար զգեստներով, բայց անատոլիական հուշարձաններում զինվորները (և պատերազմի աստվածը) հագած են կարճ, մինչև ծնկները չհասնող տունիկաներ»³⁸: Բացի դրանից, խեթ «զինվորներն ունեն մարտական տապար և կարճ թուր, իսկ եգիպտական պատկերաքանդակների երկարազգեստ խեթական զինվորներն, ընդհակառակը, ունեն երկար նիզակներ»³⁹: Ի դեպ, Ի. Մ. Դյակոնովի կարծիքով, «Զիակառքերի միջոցով մարտ վարելու արվեստը Փոքր Ասիա կարող էր թափանցել նաև՝ շրջանցելով խուռիներին, օրինակ, «Մանդագեղի» կամ «Սալա ցեղի» նման ինչ-որ վարձկան զորքերի միջոցով»⁴⁰, իսկ վարձկաններ տրամադրած սալա և խեմուա ցեղերի հայրենիքը նա տեղորոշում է «Հայկական լեռնաշխարհում՝ Եփրատի և Վանա լճի միջև, հնարավոր է նաև ավելի արևելք»⁴¹: Ընդ որում, այդ նույն տարածքում էր գտնվում Տարոնը՝ մանդա և սալա ցեղերի վերնախավերից ծագած Մանդակունի և Մադկունի/Սլկունի նախարարություններով⁴²: Իսկ սա փաստ է, որ խոսում է մանդա և սալա ցեղերի հայրենիքը ևս Տարոնում գտնվելու մասին⁴³:

Եգիպտական բարձրաքանդակների վերոհիշյալ երկարափեշ զինվորներից ծամավորների վերաբերյալ ենթադրում ենք, որ դրանք քուրմ-զինվորներ են եղել: Հովհան Մամիկոնյանը Գիսանե աստծու պաշտամունքն իրագործած քրմերի վերաբերյալ գրում է. «Եւ Գիսանե զի գիսաւոր էր, վասն այնորիկ և պաշտօնեայք նորա գէսք ունէին, գոր [Գրիգոր Լուսավորիչը] հրամայեաց կտրել»⁴⁴: Հրամանն

³⁷ Strabo, XI, 14, 12 (Ստրաբոն, Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Եր., 1940, էջ 63):

³⁸ Герни, նշվ. աշխ., էջ 97: Հմմտ. Ceram C. W., նշվ. աշխ., էջ 28:

³⁹ Герни, նշվ. աշխ., էջ 98:

⁴⁰ Дьяконов И. М., Предыстория армянского народа. История Армянского нагорья с 1500 по 500 г. до н. э., Ер., 1968, стр. 43.

⁴¹ Նույն տեղում, էջ 52-53:

⁴² Ղափանցյան Գ., Հայոց լեզվի պատմություն (հին շրջան), Եր., 1961, էջ 45-46:

⁴³ Дьяконов И. М., նշվ. աշխ., էջ 53:

⁴⁴ Յովհան Մամիկոնեան, նշվ. աշխ., էջ 109:

իրագործել է Հայոց բանակի արևմտյան ստորաբաժանման («դռան») հրամանատար Անգեղտան իշխանը: «Եւ լուեալ զայս իշխանն Անկեղ տանն, ետ հրաման գերծել զգէս նոցա և խաղացուցանել զնոսս ի Փայտակարան քաղաք ի տուն բանտին արս ՆԼԸ (//438)»⁴⁵: Իսկ Գիսանէ «մեծ աստվածը» իր եղբայր Դեմետրի հետ միասին իրենց ձոնված տաճարներն ունեին Տարոնի Քարքե լեռան վրա:

Խեթական բանակում ծառայած կառավարտիկները տարբերվում էին միմյանցից նաև իրենց սանրվածքով: Էդ. Մեյերի դիտարկումներով, այստեղ այն կառավարտիկներից բացի, որոնց ծամը երկու զանգուրով իջնում է թիկունքին, կան նաև այնպիսիները, որոնք խուզում են գլխի մազերը՝ թողնելով միայն գլխի հետևից կախված մի հյուսք: Ընդ որում, ինչպես նա է նկատել տալիս, տարբեր են նաև այդ երկու խմբերի կրած վահանները և դրանց մարտակառքերը:⁴⁶ Կառավարտիկների սանրվածքի տարբերության առթիվ Ա.Խաչատրյանը գրում է. «Բնավ զարմանալի մի բան պիտի չլինի, եթե վերջին ձևի հերահարդարումը գտնենք և հին հայերի մեջ»⁴⁷: Նա վկայակոչում է Փավստոս Բուզանդի հաղորդումները տարոնցի պատանի Արտավազդ Մամիկոնյանի և տխրահռչակ Մերուժան Արծրունու վերաբերյալ, որոնք «ցից, ցցունք» կամ «զէս» ունեին⁴⁸: Մրանցից առաջինի սանրվածքի այդ ձևը, Փավստոս Բուզանդի համոզմամբ՝ «ըստ մանկութեան օրինի՝ ըստ կրօնից հայոց էր», բայց Մերուժանի այդօրինակ սանրվածքի առթիվ որևէ պատճառաբանություն չի բերում: Նկատի առնելով, որ քրիստոնեությունն ուրացած այդ անձնավորությունը Բուզանդի երկում նաև *կախարդ* է կոչվում և նշվում է, թե ինչպես է ճակատամարտից առաջ «անցեալ ըստ ուղին՝ իջանէր ի հմայս քաղղէութեան, զքուէս հարցանէր. և ոչ գոյր նմա յաջողակ յուռութ կախարդանացն՝ յոր յուսայրն»⁴⁹, պարզ է դառնում, որ սա հետևել էր իր նախնի հեթանոս քրմերի օրինակին:

Կարծում ենք, թե Ա. Խաչատրյանի գրքում բերված «Գարեջուր խմելու տեսարան Քյուլ-թեփեից» (սա Փոքր Ասիայի Քյուլ-թեփե հնավայրն է) բացատրությամբ նկարը ներկայացնում է երկու քուրմ-կառավարտիկների գարեջուր խմելու ծիսական գործողությունը: Նախ բերենք Ա. Խաչատրյանի թարգմանությունը ավելի քան 100 տարվա հնությամբ Էդ. Մեյերի աշխատությունից: «Քյուլթեփեում գտնվել է օձաքարի (Serpentin) մի գլանակնիք»⁵⁰: Գլխավոր տեսարանը ներկայացնում է երկու մարդ, որոնք իրենց առջև դրված մի ամանից գարեջուր են ծծում

⁴⁵ **Յովհան Մամիկոնեան**, նշվ. աշխ., էջ 107:

⁴⁶ **Meyer Ed.**, Geschichte des Altertum, II, B. I. Abteilung, Die Zeit der egyptischen grossmacht, 1928 (տե՛ս **Խաչատրյան Ա.**, Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն, Եր., 1933, էջ 107-108):

⁴⁷ Նույն տեղում, էջ 108:

⁴⁸ Նույն տեղում, էջ 108-109:

⁴⁹ **Բուզանդ**, Ե, իսգ:

⁵⁰ Նկարը տե՛ս **Խաչատրյան Ա.**, նշվ. աշխ., էջ 253:

երկար եղեգնափողերով... Սրա հիմքը կազմող սովորույթը նկարագրում է Քսենոփոնը⁵¹, հաղորդելով արմենների մասին, թե նրանք քաղցր (իմա՝ ախորժեղի – Ս. Պ.) զարեջուրը (բառացի՝ զարեգինի) ամաններից խմում էին. զարեհատիկները լողում էին զարեջրի երեսին. ամանում դրված էին հանգուցազուրկ եղեգնափողեր՝ մեծ ու փոքր, որոնցով պետք էր ծծել, երբ ուզեին խմել...»⁵²: Քյուլթեփեի գլանակնիքը ուշագրավ է նաև նրանով, որ «գիսակ-ցցուն են կրում այն երկու մարդիկ, որոնք բոլորովին համաձայն են հեթիտ գորքերի կառամարտիկներին»⁵³:



Բերված նկարի ոչ թե սովորական, այլ ծիսական զարեջրախում պատկերելու մասին են խոսում զարեջրի ամանից վերև գտնվող արևի և սրանից աջ՝ կենաց ծառի խորհրդանշանները: Վերջինից աջ էլ պատկերված է ինչ-որ թևաբաց թռչուն, իսկ սրա ներքևում՝ մի կատվազգի գիշատիչ: Ցից (ցցունք, գես) ունեցող քուրմ-կառամարտիկների պատկերները գլանակնիքին հենց այնպես չեն հայտնվել: Դա պետք է վկայությունը լինի այն քուրմ-կառամարտիկների քուրմ-հրամանատարին պատկերելու մասին:

Եզրահանգում. 1.Տարոն գավառի անվանադիրը համարված Տարբանի մասին ավանդազրույցը այնքան հին պատմական շերտ ունի, որ այն առնչել են Նոյ նահապետի ժամանակներին, իսկ Տարբանին համարել են Նոյի Սեմ որդու որդին: Իրականում Տարբանի նախատիպը եղել է հնագույն Տարոնի քուրմ-արքաների հավաքական կերպարը, իսկ նրա *Տարբան* անունը տարբերակն է հայերեն *տորբան* «վարդապետ» բառի:

2.Մ.թ.ա. XVII-XIII դարերում Հասուվա երկիրը՝ հնագույն Տարոնն իր շրջակայքով, ռազմաքաղաքական կարևոր ուժ է եղել, իսկ նրա մանդա և սալա ցեղերի կառամարտիկները՝ որպես վարձկաններ, ծառայել են իսթական բանակում: Դրանց մի մասը քուրմ-գինվորներ է եղել:

3. Մատուցված, քննարկված և մեկնաբանված տարաբնույթ նյութը, մեր կողմից հատուկ անուններին տրված ստուգաբանությունների հետ միասին հիմք

⁵¹ Xen. Anabasis, IV, V, 25.

⁵² Հմմտ. Քսենոփոն, Անաբասիս, թարգմանությունը Սիմոն Կրկյաշարյանի, Եր., 1970, էջ 97:

⁵³ Meyer Ed., Reich und Kultur der Chetiter, 1914, S. 55 (տե՛ս **Խաչատրյան Ա.**, նշվ. աշխ., էջ 102-103):

են տալիս պնդելու, որ խեթական թագավորների արշավանքների և դրանց նախորդած ժամանակաշրջաններում Հասուվայի՝ հետագա Տարոնի բնակչությունը եղել է հայախոս և մասն է կազմել հնդեվրոպական-հայկական էթնոսի: Նա եղել է աշխարհակալ խեթ թագավորների բանակների ավերիչ արշավանքներին դիմադրող ու դիմադարձող առաջամարտիկը:

О ЖРЕЧЕСТВЕ ДРЕВНЕЙШЕГО ТАРОНА

Петросян С. Г.

Ключевые слова: *бог, жрец, воин, эпоним, поле, гора, топоним, ойконим, Хасува, Тарон, Турубера.*

Как в хеттских клинописных источниках, так и в армянских сказаниях, сохранились древние свидетельства о жречестве древнеармянской области Тарон. Одно из свидетельств, это сказание о Тарбане - эпониме Тарона. Сопоставляя имя Тарбана с корнями армянского слова *торбан*, мы приходим к выводу, что на самом деле прототипом Тарбана был собирательный образ древних таронских царей-жрецов, а его имя *Тарбан* является вариантом армянского слова *торбан* «вардапет (архидиакон)». Среди воинов племен манда и сала древнего Тарона были не только представители военного, но и жреческого сословия. Последние, наверно, изображены в виде бойцов с косами.

ABOUT THE PRIESTHOOD OF THE ANCIENT TARON

Petrosyan S. G.

Key words: *God, priest, warrior, eponym, field, mountain, toponym, oikonym, Hasuva, Taron, Turuberan.*

In Hittite cuneiform sources and in Armenian legends have been preserved ancient testimonies about the priesthood of the ancient Armenian region of Taron. One of the testimonies is the legend of Tarban, the eponym of Taron. Comparing the name of Tarban with the roots of the Armenian word *torban*, we come to the conclusion that the prototype of Tarban was the collective image of the ancient Taron king-priests, and his name Tarban is a variant of the Armenian word *torban* "vardapet (archdeacon)". Among the warriors of the Manda and Sala tribes of ancient Taron were not only representatives of the military, but also of the priestly class. The latter are probably depicted as fighters with scythes.

References

1. Movsisi Xorenacvov Patmut'yun Hayoc, Yerevan, 1981 (**In Armenian**).
2. **Petrosyan S. G.** Sepagrayin Durubani/hayeren torban, //Vanadz'ori petakan Mankavarzh'akan instituti git. Nstash'rjani nyut'er, Vanadz'or, 2009 (**In Armenian**).
3. **Ivanov V. V.** Ljetopis' Xattusilisa I, «Xrestomatiya po istorii Drjevnjogo Vostoka», ch.I, M., 1980 (**In Russian**).
4. **Fasmer M.** Etimologichjeskij slovar' russkogo jazyka, t. III, Moskva, 1971 (**In Russian**).
5. **Petrosyan S. G.** Mursili I-i arevelyan arshavanqi yert'ughin, //HH GAA ShHH kentroni «Gitakan ashxatut'yunner», IV, Gyumri, 2001 (**In Armenian**).
6. **Giorgadze G. G.** Rannyaya Malaya Aziya i Xettskoe carstvo, «Istoria drjevnego mira, I, Ranyaya drevnost'», M., 1989 (**In Russian**).
7. **Xachatryan V.** Vostochnie provincii Xettskoy imperii (Voprosi toponomiki), Yerevan, 1971 (**In Armenian**).
8. **Adonc N.** Armenia v epoxu Justinyana, Yerevan, 1963 (**In Armenian**).
9. **Yeremyan S.** Hayastanə əst «Ashxarhacovc»-i, Yerevan, 1963 (**In Armenian**).
10. **Hakobyan T. Melik-Baxshyan St., Barseghyan H.** Hayastani yev harakic shrjanneri teganunneri barraran, h. II, Yerevan, 1988 (**In Armenian**).
11. **Jahukyan G.** Hayoc lezvi patmut'yun. naxagrayin zh'amanakashrjan, Yerevan, 1987 (**In Armenian**).
12. **Ach'arryan H.** Hayeren armatakan barraran, h. I-IV, Yerevan, 1971-1979 (**In Armenian**).
13. **Ach'arryan H.** Hayoc andznanneri barraran , h. IV, Yerevan, 1948 (**In Armenian**).
14. «Barrgirq hayoc», Qnnakan bnagirə yev arrajabanə **H. Amalyani**, Yerevan, 1975 (**In Armenian**).
15. **Dzhaukjan G.** Vzaimootnosheniye indoyevropeyskix, xurrito-urartsikix i kavkazskix yazikov, Yerevan, 1967 (**In Russian**).
16. **Srvandz'tyanc G.** Yerker, h. I, Yerevan, 1978 (**In Armenian**).
17. **Sh'ojedrovicki D. V.** Sim, Xam, Jafet, «Mify narodov mira», t. II (**In Russian**).
18. **Petrosyan S. G., Petrosyan L. S.** Yeryak bnakavayreri hamakargə hin Hayastanum yev Rusiayum, ShHH kentroni «Gitakan ashxatut'yunner», h. II, Gyumri, 1999 (**In Armenian**).
19. **Petrosyan S.G.**, Daserə yev yeradasut'yan drsevorunnerə hin Hayastanum, Yerevan, 2006 (**In Armenian**).
20. **Yovhan Mamikonean** Patmut'yun Taronoy, Yerevan, 1941 (**In Armenian**).
21. **P'avstosi Bivzandacvov** Patmut'yun Hayoc, Yerevan, 1987 (**In Armenian**).
22. **Ach'arryan H.**, Hayoc grerə, Yerevan, 1984 (**In Armenian**).
23. **Gerni O. R.** Xetty, Moskva, 1987 (**In Russian**).
24. **Petrosyan S. G.** Haykakan lernashxarhi hnaguyn karramartikneri masin, //«Vem», 2014, № 4 (**In Armenian**).
25. **Petrosyan S. G.** Zarmayr nahapeti yev «Qaghdeacvoc» arqayacanki masin, //ShHH kentroni «Gitakan ashxatut'yunner», Gyumri, h. XVII, 2014 (**In Armenian**).

26. **Dyakonov I. M.** Predystoriya armyanskogo naroda, Istoriya Armyanskogo nagorria s. 1500 po 500 g. do n. e., Yerevan, 1968 (**In Russian**).
27. **Ghap'ancyan G.** Hayoc lezvi patmut'yun (hin shrjan), Yerevan, 1961 (**In Armenian**).
28. **Xachatryan A.** Hayastani sepagrakan shrjani qnnakan patmut'yun, Yerevan, 1933 (**In Armenian**).
29. **Qsenop'on** Anabasis, t'argmanut'yunə Simon Krkyasharyani, Yerevan, 1970 (**In Armenian**).

Ընդունվել է՝ 20.08.2020

Գրախոսվել է՝ 09. 11. 2020

Հանձնվել է տպ.՝ 20. 11. 2020

Տեղեկություններ հեղինակի մասին

Մարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ պատմական գիտությունների դոկտոր,

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի

առաջատար գիտաշխատող, էլ. հասցե՝ vahe1996@mail.ru